

Բաժինը պարունակում է տվյալներ բնակարանային ֆոնդի, բնակչության բնակարանային պայմանների, բնակավայրերի բարեկարգման վերաբերյալ:

Բնակարանային ֆոնդը բոլոր բնականների ամբողջությունն է, անկախ սեփականության ձևերից, ներառյալ բնակելի տները, մասնագիտացված տները (հանրակացարանները, մանկրային ֆոնդի տները, ապաստարանները, միայնակների և ծերերի համար հատուկ տները, մանկատները, որբանոցները, հաշմանդամների, վետերանների համար գիշերօթիկ տները, դպրոցներին կից գիշերօթիկները և գիշերօթիկ դպրոցները, այգետնակները), բնակարանները, ծառայողական բնակելի շենքերը և այլ շինությունները, բնակվելու համար պիտանի այլ բնակելի կացարանները: Բնակելի ֆոնդի մեջ հաշվի չեն առնվում ամառանոցները, սպորտային և տուրիստական բազաները, մոթելները, քեմպինգները, առողջարանները, հանգստյան տները, պանսիոնատները, եկվորների համար տները, հյուրանոցները, զորանոցները, երկաթուղային վագոն-տնակները և այլ շենքեր ու շինություններ՝ նախատեսված հանգստի, ժամանակավոր և սեզոնային բնակության համար անկախ դրանցում քաղաքացիների բնակվելու տևողությունից:

Բնակարանային ֆոնդի հաշվառումը տարվում է հիմնական ձևերով:

պետական բնակարանային ֆոնդը ներառում է պետական ձեռնարկությունների, պետական սեփականությանը վերագրվող միավորումներին (գերատեսչական բնակարանային ֆոնդ) ամբողջությամբ տնտեսական վարման կամ օպերատիվ կառավարման տակ գտնվող այլ բնակելի շինությունները, բնակելի տները և այն շինությունները, որոնք գտնվում են տեղական ինքնակառավարման տրամադրության տակ:

հասարակական բնակարանային ֆոնդը ներառում է կոոպերատիվ կազմակերպություններին, դրանց միավորումներին, արհմիություններին և այլ հասարակական կազմակերպություններին, ձեռնարկություններին, կոլեկտիվ և խառը սեփականության ձևերի միավորումներին պատկանող բնակելի տները և այլ կառույցներում գտնվող բնակելի կառույցները:

բնակարանային և բնակչինարարական կոոպերատիվների ֆոնդն այն բնակելի տներն են, որոնք պատկանում են բնակելի և բնակչինարարական կոոպերատիվներին:

անհատական բնակարանային ֆոնդը քաղաքացիների սեփականություն հանդիսացող բնակելի տներն ու բնակարաններն են:

Բնակելի տների ընդհանուր մակերեսը որոշվում է որպես բնակարանների բնակելի և օժանդակ տարածությունների մակերեսների գումար (խոհանոցների, նախասենյակների, բնակարանների ներսի միջանցքների, լողարանների կամ ջրացնցողների, զուգարանների, պահեստանոցների կամ տնտեսական հավաքված պահարանների, ինչպես նաև տաքացվող և բնակության համար պիտանի ձեռնահարկերի, կիսավերնահարկերի, ծածկապատշգամբների): Վերը նշվածներից բացի, հանրակացարաններում օժանդակ տարածություն են հանդիսանում նաև մշակութային կենցաղային և բժշկական սպասարկման նշանակության տարածքները (մեկուսարաններ):

Բնակելի կացարանների ընդհանուր մակերեսի մեջ չեն մտնում.

– սանդղավանդակների, վերելակային սրահների, նախամուտքերի, ընդհանուր միջանցքների, նախասրահների, վերնասրահների, պատշգամբների, սյունազարդ պատշգամբների, երկարավուն պատշգամբների, չտաքացվող ձեռնահարկերի, կիսավերնահարկերի տարածքները;

– ԲԾԳ-ներով, համատիրություններով, տնային կառավարչություններով, խանութներով, պոլիկլինիկաներով, դեղատներով, բանկերով, կապի բաժանմունքներով, մանկական հիմնարկներով, կենցաղի ծառայության ձեռնարկություններով և այլնով զբաղեցված ոչ բնակելի շինությունները:

Բնակելի տարածք համարվում են բնակելի տներում և շինություններում բնակելի սենյակների մակերեսը, ննջարանները, ճաշասենյակները, հանգստի սենյակները և գիշերօթիկներում, մանկատներում ու ուսումնական հաստատությունների հանրակացարաններում, հաշմանդամների տներում արտադասարանական ուսուցման համար սենյակները, մեկ սենյակից բաղկացած բնակելի սենյակները, որոնք միաժամանակ ծառայում են նաև որպես խոհանոց, բնակելի սենյակները ոչ բնակելի շինություններում և կացարաններում դպրոցներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ և այլն:

Բնակելի տարածքներին չեն վերաբերվում խոհանոցների, միջանցքների, լողասենյակների, մթերանոցների և այլ օժանդակ ու սպասարկող կառույցների մակերեսները:

70. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԸ

(տարեվերջին)

Տարիներ	այդ թվում՝						Միջինը մեկ բնակչի հաշվով, մ ²
	Ամբողջ բնակարանային ֆոնդը		քաղաքացիների սնփականություն		պետական և համայնքային		
	բնակարանների թիվը, միավոր	ընդհանուր մակերեսը, հազ. մ ²	բնակարանների թիվը, միավոր	ընդհանուր մակերեսը, հազ. մ ²	բնակարանների թիվը, միավոր	ընդհանուր մակերեսը, հազ. մ ²	
Ընդամենը							
1996	32574	2300.2	22797	1755.7	9777	544.5	17.5
1997	32865	2324.4	24724	1860.8	8141	463.6	17.2
1998	35302	2569.4	26499	2052.6	8803	516.8	18.8
1999	36116	2794.3	27738	2191.8	8378	602.5	20.0
Քաղաքային							
1996	17132	1238.2	7410	696.5	9722	541.7	17.3
1997	17175	1242.2	9111	782.6	8064	459.6	16.9
1998	17948	1325.4	10792	881.4	7156	444.0	17.9
1999	18305	1424.6	11905	997.1	6400	427.5	19.3
Գյուղական							
1996	15442	1062.0	15387	1059.2	55	2.8	17.7
1997	15690	1082.2	15613	1078.2	77	4.0	17.6
1998	17354	1244.0	15707	1171.2	1647	72.8	19.9
1999	17811	1369.7	15833	1194.7	1978	175.0	20.9

71. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)

Տարիներ	այդ թվում՝					
	Ամբողջ բնակարանային ֆոնդը		քաղաքացիների սնփականություն		պետական և համայնքային	
	բնակարանների թիվը, միավոր	ընդհանուր մակերեսը, հազ. մ ²	բնակարանների թիվը, միավոր	ընդհանուր մակերեսը, հազ. մ ²	բնակարանների թիվը, միավոր	ընդհանուր մակերեսը, հազ. մ ²
Ընդամենը						
1996	100.0	100.0	70.0	76.3	30.0	23.7
1997	100.0	100.0	75.2	80.1	24.8	19.9
1998	100.0	100.0	75.1	79.9	24.9	20.1
1999	100.0	100.0	76.8	78.4	23.2	21.6
Քաղաքային						
1996	100.0	100.0	43.3	56.3	56.7	43.7
1997	100.0	100.0	53.0	63.0	47.0	37.0
1998	100.0	100.0	60.1	66.5	39.9	33.5
1999	100.0	100.0	65.0	70.0	35.0	30.0
Գյուղական						
1996	100.0	100.0	99.6	99.7	0.4	0.3
1997	100.0	100.0	99.5	99.6	0.5	0.4
1998	100.0	100.0	90.5	94.1	9.5	5.9
1999	100.0	100.0	88.9	87.2	11.1	12.8

72. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ ԳԱՋԱ- և ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՈՎ

	1996	1997	1998	1999
Գազի բացթողնումը բնակչությանը մեկ բնակչի հաշվով. ցանցային, մ ³	-	-	0.9	11.3
քաղաքներում	-	-	1.6	21.3
գյուղերում	-	-	-	-
Բնակչությանը (խմելու և կենցաղային) և կոմունալ կենցաղային կարիքների համար բաց թողնված ջրի օրական ծախսը մեկ բնակչի հաշվով, լ*	103	117	114	120

* Բերված են միայն ք. Ստեփանակերտի և շրջկենտրոնների (առանց Քաշաթաղի շրջանի) տվյալները:

73. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՈՒՄԸ

(տարեվերջին)

	1998	1999
Գազով մատակարարվող բնակավայրերի թիվը (ներառյալ հեղուկ գազը)	1	3
քաղաքների	1	3
գյուղերի	-	-
Փողոցային գազային ցանցի վերականգնված միագիծ ձգվածությունը, ընդամենը, կմ	16.9	52.0
այդ թվում՝		
քաղաքներում	16.9	52.0
գյուղերում	-	-
Գազի ֆիկացված բնակարանների առկայությունը, ընդամենը, հազ.	1101	7218
այդ թվում՝		
քաղաքներում	1101	7218
գյուղերում	-	-

74. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

	1996	1997	1998	1999
Ջրմուղների քանակը	23	23	23	23
Ջրմուղի առանձին ցանցերի քանակը	34	34	34	34
Բոլոր սպառողներին բաց թողնված ջուրը, հազ. մ ³	4207.7	4829.5	4695.1	4193.1
այդ թվում՝ իր սպառողներին	4021.8	4643.6	4509.2	4007.2
որից՝ բնակչությանը	2653.1	3058.0	2987.3	3161.0
կոմունալ-կենցաղային կարիքների համար	1368.6	1585.6	1521.9	846.1
Ջրի կորուստը և չհաշվառված ծախսերը	2782.6	2334.8	2326.9	2725.0

75. ՀՅՈՒՐԱՆՈՅՆԵՐ

	Հյուրանոցների թիվը, միավոր	Միանվագ տարողությունը, մահճակալտեղ	Տրամադրվել է տարվա ընթացքում, հազ. մահճակալ-օր	Եկամուտները շահագործումից, մլն դրամ	Ծախսերը շահագործումից, մլն դրամ
1996	7	325	23.8	36.7	30.9
1997	7	338	24.2	49.8	41.1
1998	7	224	18.6	68.6	51.3
1999	7	224	15.9	52.8	51.9